

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ԲԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«---» «-----» 2010թ.

N --- - Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԵՐԵՎԱՆ ԲԱՂԱՔԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՆԿԱՆ ԱՌԻԴՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի 81-րդ հոդվածի 2-րդ, 82-րդ հոդվածի 2-րդ և
4-րդ կետերով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունն
աուդիտ անցկացնելու նպատակով ներգրավել աուդիտորական
կազմակերպություն:
2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված նպատակով ձեռք բերվող
աուդիտորական ծառայության տեխնիկական բնութագիրը համաձայն
հավելվածի:
3. Առաջարկել Երևանի քաղաքապետին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ
հոդվածի 4-րդ մասի համաձայն մրցույթով գնում կատարելու ձևով ձեռքբերել
աուդիտորական ծառայություն՝ սույն որոշման 2-րդ կետով հաստատված
տեխնիկական բնութագրին համապատասխան:

ԵՐԵՎԱՆԻ ԲԱՂԱՔԱՊԵՏ

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Հավելված
Երևանի ավագանու
2010 թվականի -----
N -----Ա որոշման

Տ Ե Խ Ն Ի Կ Ա Կ Ա Ն Բ Ն ՈՒ Թ Ա Գ Ի Ր

Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունների հաշվեքննության (աուդիտի) ծառայությունների

Պետք է իրականացվի Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունների աուդիտորական ծառայություններ: Աուդիտորական ծառայությունների ավարտման վերջնաժամկետ է սահմանվում 2011 թվականի մարտի 1-ը: Աուդիտը պետք է իրականացվի ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան: Աուդիտ անցկացնելու ընթացքում անհրաժեշտ է իրականացնել.

ա) աուդիտի ենթարկվող օբյեկտի կողմից իրականացվող գործառույթների՝ օրենսդրության պահանջներին համապատասխանության գնահատում,

բ) աուդիտի ենթարկվող օբյեկտի կողմից ծախսերի տնտեսման ուղղությամբ իրականացվող աշխատանքների և տնտեսական հնարավորությունների օգտագործման գնահատում,

գ) աուդիտի ենթարկվող օբյեկտի բնականոն աշխատանքը խանգարող արհեստական խոչընդոտների ու ապօրինի գործողությունների բացահայտում:

Աուդիտորական հաշվետվությունում ներկայացված տեղեկատվությունը պետք է լինի հստակ, համառոտ և ամբողջական՝ բացառելով որևէ փաստացի անճշտություն: Աուդիտորական հաշվետվությունում ներառվում են նաև աուդիտորական ապացույցների քանակական հաշվարկներն ու գնահատականները, ինչպես նաև հղումներ օրենսդրության պահանջներին:

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 81-րդ հոդվածի 2-րդ կետի՝ Երևանի բյուջեի կատարման վերահսկողությունն արդյունավետ իրականացնելու նպատակով ավագանին պարտավոր է սահմանված կարգով ներգրավել աուդիտորական ծառայություններ, որոնց դիմաց վճարումը կատարվում է Երևան քաղաքի բյուջեից:

Հաշվի առնելով, որ Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը ավագանուն պետք է ներկայացվի մինչև 2011 թվականի մարտի 1-ը, իսկ ծառայությունը պետք է մատուցվի 2011 թվականին և վճարումն իրականացվի Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեից, ուստի աուդիտորական ծառայություններ ներգրավելու նպատակով ներկայացվում է Երևանի ավագանու որոշման նախագիծ:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N 1

**«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՆԿԱԽ ԱՌԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի կատարման տարեկան
հաշվետվության վերաբերյալ անկախ աուդիտ անցկացնելու մասին» Երևան
քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական
ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N 2

**«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՆԿԱԽ ԱՌԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ անկախ աուդիտ անցկացնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեով նախատեսված միջոցներում փոփոխություններ չեն սպասվում:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ